

ՕՏԱՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Պ. Մ. ՆԱԶԱՐԵԱՆ

Հայերենի տերմինաշինության հարցը՝ կապված այլազգի ծագում ունեցող բառերի ու տերմինների գործածության հարցի հետ, վերջնական լուծում չի ստանում հատկապես այն պատճառով, որ այլազգի տերմինների կիրառման նկատմամբ մոտեցումը հաճախ սուբյեկտիվ է: Եթե ոմանք գտնում են, որ կարիք չկա փոխել վաղուց յուրացված ու գործածական միջազգային ձևերը, ինչպես, ասենք, կոմպագիտոր, գաստրոլ, կոմպլեկտ, կոբալտ, շտեպսել տերմինները, ապա ուրիշները դրանք համարում են «օտար» բառեր, և պահանջում անպայման դարձնել երգանան, հյուրախաղ, համալիր, մասնաշենք, խրոց (կամ խցուկ):

Լեզվական օտարաբանությունը, լեզվի ազգային նորմերի ու մաքրության խախտումը առաջին հերթին այլազգի լեզվամտածողական ու քերական ձևերի գործածությունն է, որ լեզվաբանական տերմինով կոչվում է վարկաբիզմ: Այդպիսի ձևեր քիչ չեն նաև մեր գրական լեզվում, որ մտցվում են բառացի թարգմանության հետևանքով, օրինակ. «բանն այն է, որ...»-ի փոխարեն՝ «բանը նրանումն է, որ...», նույնիսկ՝ «բանը կայանում է նրանում, որ...», կենդանիներն այդ բնագոյն ունեն-ի փոխարեն՝ «կենդանիների մոտ այդ բնագոյնը կա», բավական է գործի կաշի, և ամեն ինչ կկարգավորվի-ի փոխարեն՝ «բավական է դործի կաշի, որպեսզի ամեն ինչ կարգավորվի» և այլն¹: Այսպես էլ բառային օտարաբանությունն է. այս դեպքում սեփական տարածված բառերի փոխարեն օգտագործում են օտար բառեր², օրինակ՝ կտորտանք-ի կամ չարդոն-ի փոխարեն՝ «լոմ», մեջքերեղու փոխարեն՝ «ցիտել», տափաստանի փոխարեն՝ «ստեպ» և այլն:

Տեսնենք՝ օտարաբանությունն է, արդյոք, այլածին-միջազգային տերմինների գործածությունը:

Հայտնի է, որ լեզվի, որպես մարդկային հաղորդակցման կարևորագույն միջոցի (լեզին), հիմքը նաև նրա ազգային ինֆորմայնոթյունը որոշողը նրա հիմնական բառաֆոնդը և ֆեռալանոթյունն են: Լեզվի սովորական բառերից գուրս գործածվում են տերմիններ էլ, երբ տվյալ խոսքում պետք է լինում այս կամ այն գիտական հասկացության կամ որևէ մեքենայի, ապարատի անվան գործածությունը: Բայց, եթե խոսել, միտք արտահայտել, հաղորդակցվել հա-

¹ Բավարարվում ենք մատնանշվող իրողությունների շատ օրինակներից միայն երկուսը-երեքը բերելով:

² Այդ օտարաբանության դեմ է դրել Վ. Ի. Լենինը (նաև Վ. Գ. Բելինսկին) և ոչ թե ընդհանրապես այլածին բառերի դեմ, ինչպես այդ «մեկնում են» շատերը:

րավոր է առանց տերմինների էլ, ապա առանց հիմնական սովորական բառերի, միայն տերմինների միջոցով խոսք ու հաղորդակցում չի ստացվի. տերմինների օժտված չեն էքսպրեսիվությամբ. դրանց միջոցով չի լինի արտահայտել վիշտ, զղացմունք, սեր, հարգանք, հույզ, ուրախություն և այլն, ինչպես լինում է սովորական բառերի, այդ թվում նաև ձայնարկությունների միջոցով:

Հիմնական բառերը առավելապես ալգային ծագում են ունենում, իսկ ալերմինները, որ ծնվում են գիտության, արտադրության, տեխնիկայի, կուլտուրայի զարգացման շնորհիվ, լինում են նաև այլազգի ծագման: Տերմինը, բնական է, ծագում է այն երկրում, որտեղ առաջին անգամ երևան է գալիս գիտական կամ տեխնիկական երևույթը, որը անվանվում է այդ երկրի լեզվով և տարածվում (երևույթի հետ միասին) այլ լեզուներում: Հենց վերջերս, օրինակ, 1967 թ. նոյեմբերի 17-ին, մամուլից իմացանք, որ «Միջազգային մոլորակային կենտրոնը հաստատել է Սովետական Միությունում հայտնաբերված 10 փոքր մոլորակների սովետական անվանումները»: Եվ դրանք գործ կածվեն մյուս լեզուներում:

Լեզվի մեջ այլածին շատ տերմիններ ոչ միայն օտար չեն, մանավանդ, երբ ենթարկվում են ալգային բերականությանը և հնչյունաբանությանը, այլ նաև հարստացնում են լեզուն: Մեր լեզվում ևս ամենեին օտար չեն, այլ մեծ ծառայություն են մատուցում նրան շատ միջազգային տերմիններ. ինչպես, օրինակ՝ տոնի, գրանիտ, կարիտ, վագոն, դեպո, ակտիվ, կոլեկտիվ, գեներալ, մարշալ, սայուրտ, միկրոֆոն, մագնիտոֆոն և այլն: Ալգայիսի մեծաթիվ տերմիններ շատերի կողմից մամուլում ու հաղորդելիս փոխվում են: Օրինակ՝ կոմպոզիտոր, տուրիստ, գաստրոլ, սեկցիա, սեկտոր, ֆիլիալ, կոնպոս և այլն:

Եթե լեզվաշինության անցյալ էտապներում չլուրացվեին այն այլածին բառերը, որոնք մայրենի լեզվում չկային, աղքատիկ կմնային շատ լեզուներ, մեր լեզուն ևս: Մինչդեռ այժմ, երբ այդ պրոցեսը առավել ևս օրինալի է ու կարևոր, տերմինները թարգմանում ենք... իսկ տերմինը թարգմանել՝ կնշանակի դա դարձնել սովորական բառ՝ դիտական կամ տեխնիկական նշանակության եթե ոչ աղավաղումով, ապա նրա շփոթումով: Օրինակ, բիոլոգիան թարգմանում ենք կենսաբանություն, բայց բիոֆիլիան, բիոֆիզիկան, միկրոբիոլոգիան չենք թարգմանում, պրոֆիտություն տերմինը տպագիր լեզվում փոխարինվեց արհմիությունով, բայց պրոֆեսիա, պրոֆեսիոնալ ձևերը (օրինակ՝ պրոֆեսիոնալ հիվանդություն) չեն փոխվում և այլն: Այսպիսի օրինակները բազմաթիվ են: Տերմինների, այլև տերմիններին հավասարազոր՝ միջազգային գործածության բառերի թարգմանությունը առաջացնում է այլ կարգի տարածանություններ էլ. այսպես՝ որոշ հեղինակներ «մասնաճյուղ» բառը գործածում են սեկցիայի ու սեկտորի փոխարեն, ուրիշները՝ ֆիլիալի: Կամ՝ ոմանք «զուլթի» (նաև «զուլթի») գործածում են բելուգայի դիմաց, ուրիշները՝ սելբուգայի կամ օսետի և այլն:

Բազմաթիվ են այն դեպքերը, երբ բոլոր տերմինները, ընդհանրապես միջազգային գործածության բոլոր բառերը թարգմանելու ձգտումը հանգեցնում է այն երևույթին, որ բոլոր նշանակությունների համար «սեփական» բառեր չունենալով, երկու-երեք և ավելի նշանակությունների դիմաց գործ ենք ածում միայն մեկ բառ-նշանակություն. սրա հետևանքով աղավաղվում են իմաստները: Այսպես. ռուսերեն ռեգոլյուցիա և ֆորմուլա տերմինների դիմաց գործ ենք ածում միայն «բանաձև», фортепьяно, рояль, пюанино տերմինների դի-

մաց՝ միայն «դաշնամուր»։ Բավական չէ, որ КНОСК, ЛОТОК, БУДКА, ПАЛАТКА և էլի ուրիշ նշանակությունների դիմաց գործ ենք ածում միայն մի տաղավար, հիմա էլ այդ բառով փոխարինել ենք նաև պավիլիոն տերմինը։

Տերմինները, առանձնապես գիտական ու տեխնիկական տերմինները, հիմնականում միջազգային կիրառություն են ունենում՝ ինչպես ըստ իրենց բնույթի ու ֆունկցիայի, այնպես էլ իմաստի ճշգրտության ու գործածման էֆեկտիվության տեսակետից։ Միջազգային տերմինները լինում են նաև փոքր ազգերի լեզուներից, ոչ մի լեզվում չեն փոխի, օրինակ, արտադրանքի հայկական նոր տեսակների՝ նաիրիտ, լուրինիա, սևանիտ և այլ անվանումներ, որ ստեղծվել են մեր հանրապետությունում և դարձել միջազգային-ինտերնացիոնալ տերմիններ, չեն փոխում նաև մեր Մատենադարանը, լավաշը և այլն։

Ամենևին չի բացառվում, այլ օրինաչափ է, որ կոնկրետ լեզուների քերականական, հնչյունական և այլ առանձնահատկությունների հետ չհամընկնող ալլածին տերմիններ ենթակա են թարգմանվելու։ Առողջ և սկզբունքային մոտեցման դիրքերից ձիշտ չէ ո՛չ լեզուն կամայական, հախուռն կերպով «մաքրելը», ո՛չ էլ այն օտարածին բառերով ողողելը։

Տերմինների և ոչ տերմինների տարբերություններից է այն, որ մինչդեռ ոչ տերմինային բառերի համար հոմանիշների առկայությունը օրինաչափ է ու անհրաժեշտ, տերմինային բառերը հոմանիշներ չեն ունենում հանուն դիտական իմաստի կայունության։ Այլապես ընթերցողներից շատերը կկարծեն, թե տարբեր հասկացություններ են, օրինակ, կուլտուրա-մշակույթ, մասստա-զանգված, կինո-շարժապատկեր, տուրիզմ-գրոսաշրջիկություն և նման զուգահեռ գործածություններ։

Ո՞րն է լեզուն թուլագոր դարձնող հախուռն «լեզվամաքման» սկզբնաղբյուրը, պատճառը։ Բառերը, մասնավորապես տերմինները, ինքնանպատակ կերպով չէ, որ գործածվում են. բառը բովանդակում է որոշակի հասկացություն, որոշակի առարկա, և երբ արտասանվում է բառը, որն անխզելիորեն կապված է մտածողության հետ, մարդու ուղեղում իմաստավորվում և ընկալվում է նրանով արտահայտված հասկացությունը։

Հայտնի է, որ երբ գիտական հիմնավորում պահանջող որևէ սկզբունք զուրկ է լինում գիտական հիմքից, նախաձեռնողները ելնում են ոչ գիտական մոտիվներից։ Մեր տերմինաշինությունը ևս, ցավոք, զերծ չէ դրանից։ Մոտիվներից մեկն այն է, թե «օտար» բառերի գործածության դեպքում լեզուն իբր ասիմիլյացիայի է ենթարկվում։ Այս փաստարկը, իհարկե, ավելի քան անհիմն է։ Թիված բառերը միայն հեղհեղուկ ու արհեստական են դարձնում դրական լեզուն, իսկ այդ դեպքում մարդիկ հակվում են խոսելու իրենց իմացած մի այլ լեզվով կամ իրենց հարադատ խոսվածքով։

Մյուս մոտիվն այն է, թե իբր հայերը «օտար» բառերը չեն հասկանալ Եթե մինչհեղափոխական շրջանում հայ գյուղացին գործ էր ածում պատրոն (սկես-րայր), պատրոնատաշ, կոնսիստորիա, կաբանտին, բուլվար, բազաժ, ֆելդ-մարշալ և այլն, ապա միթե այժմյան հայերը, որոնց շրթներից լսվում են, օրինակ, դիսպետչեր, ագրեգատ, տուրիզմ, ինֆեկցիա, կոմպոզիցիա, էվոլյուցիոնիզմ, ռեզյուցիոնիզմ, դեգլեներատ, սկլերոզ, — «օտար» բառեր չե՞ն հասկանալ Եվ ի՞նչ տրամաբանությամբ են միջազգային կամ ազգամիջյան գործածության բառերը համարվում «անհասկանալի»։ Ո՞րն է օտարաբանությունը՝ այն պնդուսը, որ պետք է կիրառել իմաստները ձիշտ արտահայտող և տվյալ մոդո-

վրրդի համար էլ հասկանալի ու գործածական միջազգային բառերը, թե՛ այն, երբ այդ բառերը փոխում են արխաիկ կամ սարքովի՝ իսկապես օտար բառերով:

Այլադրի ծագում ունեցող բառերից խուսափելու վերաբերյալ Վ. Գ. Բեյ-լինսկին ասել է. «Бедна та народность, которая трепещет за свою самостоятельность при всяком соприкосновении с другою народностью»³.

Մարքսիզմ-լենինիզմի ուսմունքից և հասարակական զարգացման օբյեկտիվ օրենքներից էլ բխում են ժողովուրդների միջև լեզվի, կուլտուրայի ձևերի փոխանցումներ՝ կյանքը, մարդկային հասարակությունը ընթանում է ոչ թե զևայի կղզիացում, այլ դեպի ընդհանրություն:

Լեյվարան Խ. Իշխանյանը վերջերս մամուլում հանդես եկավ հայոց լեզուն «օտար» լառերից «մաքրելու» վերաբերյալ հարցով⁴:

Հնարավոր չէ կանգ առնել Իշխանյանի՝ իր իսկ որակումով «տերմինաշինության հարցերի դիտական բազմակողմանի հիմնավորումների» վրա: Նա սահմանում է գործ չածել ոչ մի այլազգի բառ և նույնիսկ «լուրիկ», «մարաջախտ», «համույթ», «հյուլե», «խառնուրդ» ձևերը ճիշտ համարելով պամիդո-րի, մաբշալի, անսամբլի, ատոմի, ագրեգատի փոխարեն:

Հայերենի տերմինաշինության հարցերը առողջ լուծելու համար, մեր կարծիքով, պետք է ոչ թե թարգմանենք՝ աղավաղենք տերմինները, այլ մյուս դարգացած լեզուներում կիրառվող սկզբունքի օրինակով հիմնականում կիրառենք միջադրային գործածության դիտատեսիսիկական տերմինները: Դա կլինի տերմինաշինության հարցի օրինաչափ ու ռացիոնալ լուծումը, բոլոր լեզուների համար: Նվ բանի որ լեզուն ազգային ու պետական հոգատարության ու կարգավորման առարկա է, ապա թվում է, որ վերջապես կսահմանվի հայերենի տերմինաշինության իսկական սկզբունքը, որ բոլորի համար պարզ ու հայտնի լինի, թե ինչը պետք է թարգմանել, ինչը՝ չթարգմանել:

³ В. Г. Бейлинский, Пол. собр. соч., т. 7, стр. 436.

⁴ «Գարուն», 1967, № 7, «Սովետական գրականություն», 1968, № 1, «Լրաբեր», 1969, № 7 և այլն: